ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՔՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Աքորի համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, Գ.Աքորի, 4-րդ փ., 1-ին շ., Հեռ.
(093)308083 , aqorigyuxapetaran@mail.ru

N 93
05 հունիս 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Աքորի համայնքի ավագանու 02 հունիսի 2017թվականի թիվ 24 և համայնքի ղեկավարի թիվ 33-Ա կարգադրությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՐԱՀԱՏ ՍԻՄՈՆՅԱՆ**

Կապ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՔՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Աքորի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Աքորի, (093)308083, aqorigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 24

ԱՔՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետով

Աքորի համայնքի ավագանին

Որոշում է

Հաստատել Աքորի համայնքի 2018թվականի բնապահպանական ծրագիրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԹԱԹՈՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ
3. ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ
5. ՊՈՂՈՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
6. ՍԻՄՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՐԱՀԱՏ ՍԻՄՈՆՅԱՆ**

Հաստատում եմ

Աքորու Համայնքապետ

Հ. Սիմոնյան

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ Լոռու մարզի Աքորի համայնքի 2018 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնություններ և դրանց ֆինանսավորման համամասնություններ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 05 բաժին
Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 6 խումբ
Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 1 դաս

Ծրագրի նպատակները

Ծրագիրը կազմված է 2001 թ-ի մայիսի 15-ին Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի կողմից ընդունված << Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> օրենքի դրույթներին համապատասխան և ներառում է.

5. Աքորու համայնքի վարչական սահմաններում գտնվող անտառային, օդային տարածքների ինչպես նաև բուսական նաև կենդանական աշխարհի պահպանման ու վերականգման միջոցառումներ:
6. Համայնքի բնակչության առողջության պահպանման նպատակաուղղված միջոցառումները, որոնց անհրաժեշտությունը պայմանավորված է << Արմենիա Քափր Փրոգրամ>> ՓԲԸ-ի գործունեությամբ:

Ծրագրի հիմնավորումը

Համայնքի տարածքի նկարագրությունը / անտառային, օդային տարածքների / բուսական և կենդանական աշխարհի վիճակի բնութագիրը.

1. Համայնքի վարչական տարածքը 5394 հա է այդ թվում՝
Վարելահողերը 222.0 հա, որը կազմում է վարչական տարածքի մոտավորապես 4.1%-ը
Խոտհարքները 191.0 հա, որը կազմում է վարչական տարածքի 3.5%-ը
Անտառները 1145.97հա , որը կազմում է վարչական տարածքի 21.24%-ը, որի անտառային պաշարները վերջին 10 տարիների ընթացքում կրճատվել է 30% -ով , կապված էներգետիկ ճգնաժամի պատճառով իրականացվող անօրինական ծառահատումների հետ:
Արոտավայրերը 3356.0հա, որը կազմում է վարչական տարածքի գրեթե 62.2%-ը
Բնակավայրերը 140.72 հա . որը կազմում է վարչական տարածքի 2.6%-ը

2. Աքորի համայնքը գտնվում է Ալավերդի քաղաքի հարավ արևմուտքում:
Օդային տարածքը անընդհատ ենթարկվում է աղտոտման << Արմենիա Քափր Փրոգրամ>> ՓԲԸ-ի Ալավերդու գործարանի կողմից, որը կատարվում է խոնավ եղանակների և անձրևի ժամանակ, անձրևի փոխարեն տեղում է ծծմբաթթվով հագեցած հեղուկ, որը ոչնչացնում է բուսականությունը և կենդանական աշխարհը , որի արդյունքում համայնքում պակասել է մանր եղջերավոր անասունների քանակը, վերացման եզրին են մեղվաընտանիքները և չորացել են տնամերձ հողամասերի պտղատու ծառերը:

Համայնքի բնութագիրը

Համայնքը բաղկացած է մեկ գյուղից, ունի 2801 բնակիչ: Գյուղը ունի 649 առանձնատուն և 37 ժամանակավոր կացարաններ:

Համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 1050-1100մ բարձրության վրա:

Մայրաքաղաքից հեռավորությունը 180 կմ է մարզկենտրոնից 50 կմ, Ալավերդի քաղաքից 5 կմ է:
Համայնքը ունի 850 տնտեսություն:
Համայնքը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ:

3. Անասնապահություն.
Համայնքի անհատական և ֆերմային տնտեսություններում պահվում են հետևյալ անասունները՝

Խոշոր եղջերավոր անասուններ	338
Մանր եղջերավոր անասուններ	438
Խոզեր	68
Ձիեր	53

4. Հողագործություն.
Համայնքի տարածքում մշակվում է հացահատիկ , եգիպտացորեն, կարտոֆիլ և մշակաբույսեր: Այգիները հիմնականում մշակվում են տնամերձ հողամասերում, և այն կազմում է տնամերձ հողամասերի գրեթե 50%ը, սակայն << Արմենիա Քափր Փրոգրամ>> ՓԲԸ-ի վերջին տարիների աշխատանքի և արտադրանքի ծավալի ավելացման և օգտագործում չկատարելու պատճառով վերացել է տնամերձ հողամասերի այգիները:
Օդային ավազանի աղտոտվածության պատճառով համայնքը կրում է մեծ քանակի վնասներ մշակաբույսերից:

Համայնքի ճանապարհներ

Համայնքը ունի 50 կմ ներհամայնքային և 15 կմ երկարությամբ գյուղամիջյան ճանապարհներ,որոնք երկար ժամանակ չեն վերանորոգվել և առաջացել են ջրափոսեր, որտեղ ճահճացել են արտանետումներից առաջացած աղբաջրեր և հոսում են դեպի տնամերձ այգիները և հողամասերը՝ աղտոտելով այն:Մեծ վնաս է պատճառում բերքատվությանը և մարդկանց առողջությանը: Ենթակա է հիմնանորոգման՝ կառուցելով և մաքրելով սելավատարները:

Ֆինանսական աղբյուրը

Համաձայն << Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների օգտագործման մասին>> ՀՀ օրենքի << Արմենի Քափր Փրոգրամ >> ՓԲԸ-ի Ալավերդու գործարանի կողմից վճարվող բնապահպանական վճարներից համայնքին առանձին տողով կատարվող մասհանման:

Ծրագրի խնդիրները

Ծրագրի հիմնական խնդիրներն են `

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Աքորու համայնքի վարչական տարածքում գտնվող անտառային , բուսական և կենդանական աշխարհի պահպանումը և բարելավումը:
2.Աջակցությունը տարածաշրջանային բնապահպանական խնդիրների լուծմանը:
3.Համայնքային բնակչության առողջության պահպանումը <<Արմենիա Քափր Փրոգրամ>> ՓԲ ընկերության կողմից արտանետումներից առաջացած հիվանդությունների անվաճար բուժում:
4.Ճանապարհամերձ հեղեղատարների մաքրման, սելավատարների և կամուրջների մաքրման,ինչպես նաև հեղեղատարների վերանորոգման, փողոցների բարեկարգման և ասֆալտապատման ժամանակ նոր աշխատատեղերի ստեղծում՝ բնակչության սոցիալական վիճակի բարելավում:
5. Տնամերձերում նոր այգիների հիմնման համար նոր ջրագծերի կառուցում , որը հնարավորություն կտա ապահովել բնակչության զբաղվածության և սոցիալական վիճակի բարելավմանը:

Ծրագրի առարկան

Համայնքի 1-ին և 4-րդ փողոցների հեղեղատարների վերանորոգվել են 80-ական թվականներին , երկարատև շահագործման հետևանքով քայքայվել են, շարքից դուրս եկել , որի հետևանքով ջուրը հոսում է դեպի փողոցներ, ճահճացնելով մոտակա տնամերձ հողամասերը և այգիները :
Համայնքը նպատակահարմար է գտնում 1-ին և 4-րդ փողոցների հեղեղատարների վերանորոգումը :

Ծրագրի ղեկավարը և կատարողը

7. Ծրագրի հեղինակ և ղեկավար հանդիսանում է Աքորու համայնքապետարանը.
8. Կատարող
   - Բնապահպանության միջոցառում ՝ Աքորու գյուղապետարանը
   - Առողջապահության միջոցառում՝ Աքորու գյուղապետարանը և Աքորու մանկապարտեզը

Ծրագրի հսկողությունը

Աքորու գյուղապետարանը ստացած ֆինանսական միջոցների և կատարած աշխատանքների վերաբերյալ պարբերաբար / եռամսյակը մեկ անգամ/ տվյալներ է ներկայացնում դոնորներին: Աքորու գյուղապետարանը և Աքորու մանկապարտեզ ՀՈԱԿ-ը հատկացված գումարների օգտագործման մասին հաշվետվություն են ներկայացնում գյուղապետարանին:

Ծրագրի աշխատանքների վերահսկողությունը

Ծրագրի աշխատանքների կատարման վերահսկողությունը կատարում է համայնքապետ Հ. Սիմոնյանը և համապատասխան ծառայությունները ըստ ոլորտների:

Ծրագրի իրականացման միջոցառումները
Ցանկը ըստ հերթականության

Բնապահպանական միջոցառումներ

2. 1-ին և 4-րդ փողոցների հեղեղատարների վերանորոգում — 600.0 հազ. դրամ

Առողջապահական միջոցառումներ

1.Մանկապարտեզին լրացուցիչ սննդամթերքի մատակարարում — 722.6 հազ. դրամ

2018թ

Միջոցառման համար անհրաժեշտ ծախսերը
Ըստ եռամսյակի

	Միջոցառումներ անվանումը	ընդամենը հազ. դրամ	I	II	III	IV
	Բնապահպանական միջոցառումներ					
1	1-ին և 4-րդ փողոցների հեղեղատարների վերանորոգում	600.0		300.0	300.0	
	ընդամենը բնապահպանություն	600.0		300.0	300.0	
	Առողջապահական միջոցառումներ					
1	Մանկապարտեզի սննդամթերքի մատակարարում	722.6	322.6	200.0	200.0	
	Ընդամենը առողջապահություն	722.6	322.6	200.0	200.0	
	Ընդամենը	1372.6	322.6	500.0	500.0	

Միջոցառումների ցանկը և անհրաժեշտ գումարը

2018թ միջոցառումների համար անհրաժեշտ է ----- 1372.6 հազ դրամ

- բնապահպանական միջոցառումների համար 600.0 հազ դրամ
- առողջապահական միջոցառումների համար 722.6 հազ դրամ

Բնապահպանական միջոցառումներ

1. 1-ին և 4-րդ փողոցների հեղեղատարների վերանորոգում 600.0 հազ դրամ

Առողջապահական միջոցառումներ

1.Մանկապարտեզին լրացուցիչ սննդամթերքի մատակարարում 722.6 հազ դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՔՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Աքորի համայնք, հասցե գ Աքորի,
հեռ. 060800680 էլ. փոստ՝ aqori.lori@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 02 » հունիսի 2017 թվական, 33-Ա

ԱՔՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 07-Ի ԹԻՎ 20-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72–րդ հոդվածի 1-ին մասով և համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 02 -ի N 23- Ա որոշմամբ՝

կարգադրում եմ.

1. ՈՒԺը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2017թվականի ապրիլի 07-ի «Հանձնաժողով կազմելու մասին» թիվ 20 -Ա կարգադրությունը:

2. Կարգադրությունը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՀԱՏ ՍԻՄՈՆՅԱՆ